ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-21/03

գ. Լոռի Բերդ «05» օգոստոսի 2021 թ.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարդարյանշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սիրարփի Սարդարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3.645.000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, ընդ որում՝ 1-5 չափաբաժինների աշխատանքների համար 1.115.000 (մեկ միլիոն հարյուր տասնհինգ հազար) դրամը վճարողի հաշվին է փոխանցվելու 900252000105 գանձապետական հաշվից, 6-10 չափաբաժինների աշխատանքների համար 1.695.000 (մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար) դրամը՝ 900252000931 գանձապետական հաշվից, 11-12 չափաբաժինների աշխատանքների համար 580.000 (հինգ հարյուր ութսուն հազար) դրամը՝ 900252114153 գանձապետական հաշվից, իսկ 13 չափաբաժնի աշխատանքների համար 255.000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) դրամը՝ 900252114302 գանձապետական հաշվից :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____. էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

2

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	«Սարդարյանշին» ՍՊԸ
Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5	ք.Վանաձոր, Երևանյան խճ.147/1 բն.33
ՀՎՀՀ 06954163	ՀՎՀՀ 06956374
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՀ 900252000105	«Լոռի» մ/ճ,
ՀՀ 900252000931	Հ/Հ՝ 220053335596000
ՀՀ 900252114153	Տնօրեն՝ Ս.Սարդարյան
ՀՀ 900252114302	
Ա. Ներսիսյան	
_____	_____
	/ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 05 » 08 20 թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը **
1	71351540/2	Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի համայնքային կենտրոնի մարզադահլիճի վերանորոգման, հանդիսությունների սրահի հատակի սալիկապատման, տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	285 000	1	գ.Ագարակ	Պայմանագիրն ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց:
2	71351540/1	Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման, ամրացման, տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	285.000	1	գ.Ուռուտ	
3	71351540/4	Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	190.000	1	գ.Յաղդան	
4	71351540/3	Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի համայնքային կենտրոնի մասնակի նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	190.000	1	գ.Լեջան	
5	71351540/5	Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի կենտրոնների բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	165.000	1	Ագարակ, Բովաձոր, Լոռի Բերդ, Յաղդան, Ուռուտ, Կողես, .Լեջան և Սվերդլով գյուղեր	
6	71351540/8	Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	380.000	1	գ.Բովաձոր	
7	71351540/7	Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	380.000	1	գ.Սվերդլով	
8	71351540/11	Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր	դրամ	280.000	1	գ.Լոռի Բերդ	

		ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն					
9	71351540/10	Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	275.000	1	գ.Հովնանաձոր	
10	71351540/9	Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	380.000	1	գ.Կողես	
11	71351540/13	Լոռի Բերդ համայնքի Լեջան և Սվերդլով բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	290.000	1	.Լեջան և Սվերդլով գյուղեր	
12	71351540/12	Լոռի Բերդ համայնքի Բովաձոր, Յաղդան, Կողես բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցի մասնակի նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	290.000	1	Բովաձոր, Յաղդան և Կողես գյուղեր	
13	71351540/6	Լոռի Բերդ համայնքի բնակավայրերում գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	255.000	1	Ագարակ, Բովաձոր, Ուռուտ, Կողես, գյուղեր	

Կատարողը պետք է ունենա տվյալ ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա:

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:
2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝

• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,

• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,

• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,

• ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,

• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,

• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,

• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,

• կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,

• շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,

• հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,
• կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
• կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
• շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները,
• Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները:
• պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում:

Հաշվետվության ներկայացման պահանջներ

Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ընթացիկ և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ:

Ավարտական հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ:

Ընթացիկ հաշվետվությունները նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	«Սարդարյանշին» ՍՊԸ
Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5	ք.Վանաձոր, Երևանյան խճ.147/1 բն.33
ՀՎՀՀ 06954163	ՀՎՀՀ 06956374
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՀ 900252000105	«Լոռի» մ/մ,
ՀՀ 900252000931	ՀՀ 22005333559600 0
ՀՀ 900252114153	Տնօրեն Ս.Սարդարյան
ՀՀ 900252114302	
Ա. Ներսիսյան	
_____	_____
	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 2
«05» 08 2021թ. կնքված
***ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-21/03** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/2	Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի համայնքային կենտրոնի մարզադահլիճի վերանորոգման, հանդիսությունների սրահի հատակի սալիկապատման, տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	99750	156750	156750	156750	156750	156750	156750
2	71351540/1	Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման, ամրացման, տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	99750	156750	156750	156750	156750	156750	156750
3	71351540/4	Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	66500	104500	104500	104500	104500	104500	104500
4	71351540/3	Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի համայնքային կենտրոնի մասնակի նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	66500	104500	104500	104500	104500	104500	104500
5	71351540/5	Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի կենտրոնների բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	57750	99000	99000	99000	99000	99000	99000

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	«Սարդարյանշին» ՍՊԸ
Լոռի մարզ, Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5	ք.Վանաձոր, Երևանյան խճ.147/1 բն.33
ՀՎՀՀ 06954163	ՀՎՀՀ 06956374
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՀ 900252000105	«Լոռի» մ/ճ,
Ա.Կերոսիսյան	Հ/Հ 22005333559600
_____	Տնօրեն Ս.Սարդարյան
	_____
	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 2
«05» 03 2021թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	71351540/8	Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	133000	133000	133000	133000	133000	133000	133000
7	71351540/7	Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	133000	133000	133000	133000	133000	133000	133000
8	71351540/11	Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	98000	98000	98000	98000	98000	98000	98000
9	71351540/10	Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի ներհամայնքային ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	96250	96250	96250	96250	96250	96250	96250
10	71351540/9	Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի ճանապարհի կանոնավոր ձևի տուֆ քարով սալարկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	133000	133000	133000	133000	133000	133000	133000

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
հ/հ 900252000931

Ս. Ներսիսյան

_____

ԿԱՏԱՐՈՂ

«Սարդարյանշին» ՍՊԸ
ք.Վանաձոր, Երևանյան խճ.147/1 բն.33
ՀՎՀՀ 06956374
«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
«Լոռի» մ/ճ,
հ/հ 22005333559600 0
Տնօրեն Ս.Սարդարյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«05» 08 2021թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
11	71351540/13	Լոռի Բերդ համայնքի Լեջան և Սվերդլով բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	101500	101500	101500	101500	101500	101500	101500
12	71351540/12	Լոռի Բերդ համայնքի Բովաձոր, Ցաղդան, Կողես բնակավայրերի ջրամատակարարման ներքին ցանցի մասնակի նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	101500	101500	101500	101500	101500	101500	101500

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	«Սարդարյանշին» ՍՊԸ
Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5	ք.Վանաձոր, Երևանյան խճ.147/1 բն.33
ՀՎՀՀ 06954163	ՀՎՀՀ 06956374
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՀ 900252114153	«Լոռի» մ/ճ,
	Հ/Հ՝ 220053335596000
Լ.Ներսիսյան	Տնօրեն՝ Ա.Սարդարյան
_____	_____
	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 2
« 05 » 07 2021թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
13	71351540/6	Լոռի Բերդ համայնքի բնակավայրերում գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	89250	102000	102000	102000	102000	102000	102000

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	«Սարդարյանշին» ՍՊԸ
Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 5	ք.Վանաձոր, Երևանյան խճ.147/1 բն.33
ՀՎՀՀ 06954163	ՀՎՀՀ 06956374
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՀ 900252114302	«Լոռի» մ/ճ,
	Հ/Հ՝ 22005335596000
Ա. Ներսիսյան	Տնօրեն Ա.Սարդարյան
_____	_____
	/Անորոշություն/